Արձանագրություն N 2

Առողջապահության նախարարության 2022 թվականի կարիքների համար էլեկտրոնային աճուրդով, հեռուստատեսային ծառայությունների ձեռք բերման նպատակով «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2022/9» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրություն

ք. Երևան «13» «Դեկտեմբեր» 2021թ.
ժամը 15:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Վ. Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ	Լ. Բաբախանյան, Ն. Դանիելյան
Հանձնաժողովի քարտուղար	Զ. Թովմասյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Վ. Հակոբյան)

Ընդունել ի գիտություն, որ 29.11.21թ. հրապարակվել է հրավեր՝ eauction.armeps.am համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2021 թվականի դեկտեմբերի 7-ն, ժամը 14:15-ին, հակադարձ աճուրդը՝ 2021 թվականի դեկտեմբերի 8-ին ժամը 14:15-ին:

2021 թվականի դեկտեմբերի 9-ին ժամը 15:00-ին հրավիրվել է գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստ, որի ժամանակ գնահատող հանձնաժողովը գնահատել է մասնակիցների կողմից ներկայացված հայտերը:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Էյչ-Քեյ» ՍՊԸ	metaksya.harutyunyan@gmail.com	0258113
2	«ՊԵՑՑՈ» ՍՊԸ	pezzoproduction@gmail.com	06955741
3	«Արթուր Գրիգորյան» Ա/Ձ	artgrirtv@gmail.com	23175651

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Վ. Հակոբյան)

Մասնակիցների կողմից ներկայացված հրավերով պահանջվող փաստաթղտերը գնահատվել են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Վ. Հակոբյան)

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացի «Էյչ-Քեյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում՝ «Հավելված 1» և«Հավելված 1.2» բացակայում է էլեկտրոնային ստորագրությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Վ. Հակոբյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

5. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացված հայտերի գնահատման և ամփոփման մասին

(Վ. Հակոբյան)

«ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2022/9» ծածկագրով գնման ընթացակարգի հակադարձ աճուրդում հայտ է ներկայացրել՝ «Էյչ-Քեյ» ՍՊԸ-ն, «ՊԵՑՑՈ» ՍՊԸ-ն և «Արթուր Գրիգորյան» Ա/Ձ-ն:

«Էյչ-Քեյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Հավելված 1» և «Հավելված 1.2» բացակայում էր էլեկտրոնային ստորագրությունը, որը հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի և հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.11 ենթակետի պահանջները՝ «Էյչ-Քեյ» ՍՊԸ-ին տրվել է հայտի շտկման հնարավորություն:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի և հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.11 ենթակետի պահանջները, ինչպես նաև մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը: Հաջորդ նիստի օրը նշանակվել է 2021 թվականի դեկտեմբերի 13-ին ժամը 15:30-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

6. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Վ. Հակոբյան)

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները հակադարձ աճուրդի ավարտից հետո՝ ՀՀ դրամ

Հ/Հ	Ծառայության անվանումը	«Էյչ-Քեյ» ՍՊԸ			«Արթուր Գրիգորյան» Ա/Ձ			«ՊԵՑՑՈ» ՍՊԸ		
		Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	Հեռուստատեսային արտադրանքի հետ կապված ծառայություններ	8,400,000		8,400,000	8,500,000		8,500,000	8,700,000		8,700,000

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Վ. Հակոբյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի և հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.11 ենթակետի պահանջները, ինչպես նաև մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝ հանձնաժողովի նիստը համաձայն կասեցվել էր մինչ 2021 թվականի դեկտեմբերի 13-ը:

«Էյչ-Քեյ» ՍՊԸ -ի կողմից ներկայացվել է շտկված՝ հավելվածները («Հավելված 1» և «Հավելված 1.2»), որը հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

Որոշվեց.

«ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2022/9» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Էյչ-Քեյ» ՍՊԸ-ին:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԾՁԲ-2022/9» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ չի սահմանվում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Վ. Հակոբյան

Անդամներ՝ ---------- Լ. Բաբախանյան

---------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------- Զ. Թովմասյան